ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИА
МАРЗ АРМАВИР
ОБШИНА БАМБАКАШАТ

« 19» Դեկտեմբերի 2011թ Թիվ 186

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊՐՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ.

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածով, Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» 2-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 108 թերթ:

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

12187-11
19 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 2-Ն

«15» Դեկտեմբերի 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի 2012 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 51300.0հազ. դրամ, ծախսերի գծով՝ 51300.0 հազ. դրամ, դեֆիցիտը /պակասուրդ/ 0.0 հազ. դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 40 տոկոսը:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Ալեքսանյան	Նաիրի	.....	.....	.....
2.Ազարյան	Մուշեղ	.....	.....	.....
3.Բարեղամյան	Ռուբեն	.....	.....	.....
4.Բաղդասարյան	Ռուբիկ	.....	.....	.....
5.Ղարիբյան	Լևոն	.....	.....	.....
6.Մկրտչյան	Նորիկ	.....	.....	.....
7.Սարգսյան	Արա	.....	.....	.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2011թ. Դեկտեմբերի 15
գ.Բամբակաշատ